# Ն/Ե ակտեմրա® (տոցիլիզումաբ) պոլիարտիկուլյար յուվենիլ իդիոպատիկ արթրիտի (պՅԻԱ) բուժման համար

## Ինչ է պետք իմանալ ակտեմրայի մասին

Այս գրքույկը պարունակում է կարևոր տեղեկատվություն օգնելու պՅԻԱ-յով հիվանդներին և իրենց ծնողներին հասկանալու ակտեմրայով բուժման առավելությունները և վտանգը:

FEB-2018, Version 1.0

Այս ուսուցողական նյութերը պարտադիր են ներերակային (ն/ե) ակտեմրայի հետգրանցումային դիտարկման համար՝ ցուցված մանկական պոլիարտիկուլյար յուվենիլ իդիոպատիկ արթրիտի (պՅԻԱ) բուժման համար՝ նվազեցնելու դեղի ընդունման հետ կապված ընդգծված վտանգները:

Հետադարձ կապ՝
Դուք կարող եք կապվել ստորև ներկայացված կոնտակտային տվյալներով.

ՖարմաՏեք ՍՊԸ-ի դեղերի անվտանգության բաժին՝ Հոֆֆմանն-Լյա Ռոշե ընկերության դեղերի անվտանգության պատասխանատու Գայանե Ղազարյանին, հետևյալ բջջային հեռախոսահամարով. +37491796688, կամ անվտանգության մասնագետի փոխարինող՝ Ռիմա Դավթյանին. +374 10734643 հեռախոսահամարով կամ գրել է.նամակ հետևյալ հասցեյով. gayaneh.ghazaryan@gmail.com (rima@pharmatech.am), ինչպես նաև ուղել Ձեր հաղորդակցությունը Ռոշ Մոսկվա դեղերի անվտանգության բաժին. Էլ.հասցեյով. moscow.ds@roche.com, բջջ. հեռ. +7-495-229 2999, ֆաքս: +7-495- 229 7999:

## Ի՞նչ պետք է իմանալ ակտեմրայի մասին

Պոլիարտիկուլյար յուվենիլ իդիոպատիկ արտրիտի (պՅԻԱ)՝ առատոիմուն հիվանդության ճիշտ բուժումը շատ կարևոր է: Բոլոր դեղերը ունեն ինչպես պոտենցիալ առավելություններ, այնպես էլ պոտենցիալ վտանգ, ինչը պետք է հասկանալ: Այս երկուսի հավասարակշռության գտնելը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել այն:

Ակտեմրան օգտագործվում է բուժելու պՅԻԱ-յով հիվանդ երեխաների համար: Ակտեմրան օգտագործվում է 2 տարեկան և բարձր տարիքի պՅԻԱ երեխաների բուժելու համար, որը հանդիսանում է բորբոքային հիվանդություն, ընթանում է մեկ և ավելի հոդերի ցավով և այտուցով: Ակտեմրան օգտագործվում է բարելավելու պՅԻԱյի ախտանիշները և կարող է օգտագործվել մետոտրեքսատի հետ զուգակցված կամ մոնոթերապիայում:

Այս գրքույկը կպատասխանի որոշ հարցերին, որը վերաբերվում է ակտեմրայի օգտագործման հետ կապված որոշակի կողմնակի ազդեցության և պոտենցյալ վտանգների հետ, որոնք կապված են ակտեմրայի ընդունման հետ: Զրուցեք ձեր կամ ձեր երեխայի բուժվող բժշկի, բուժքրոջ կամ դեղագետի հետ, եթե ունեք որևէ խնդիր կամ հարց:

Այս գրքույկը չի փոխարինում, ձեր բժիշկի , բուժքրոջ կամ դեղագետի հետ խորհրդատվությունը:

Այս գրքույկը չի փոխարինում, ձեր բժիշկի , բուժքրոջ կամ դեղագետի հետ խորհրդատվությունը:

Երբեմն դեղերը դուրս են գրվում այլ նպատակների համար, որոնք այստեղ նշված են: Ընդունեք ակտեմրան միայն այն նպատակով, որով այն ձեզ համար ցուցված է:

## Ի՞նչ պետք է իմանալ պՅԻԱյի և ակտեմրայի մասին

**Ի՞նչ է բերում պՅԻԱյի առաջացմանը:**
*պՅԻԱյի հստակ պատճառը անհայտ է: պՅԻայի ժամանակ, օրգանիզմի իմունային համակարգը չի աշխատում համապատասխան: Իմունային համակարգը ենթադրվում է, որ պետք է հակահարված հասցնի արտաքին օտար մարմիններին: Բայց երբ այն չի աշխատում համապատասխան, այն կարող է հարձակվել սեփական օրգանիզմի վրա: Այն հիվանդությունները, որոնք առաջանում են այս մեխանիզմով, կոչվում են աուտոիմունային հիվանդություններ: Երբ իմունային համակարգը հարձակվում է սեփական օրգանիզմի վրա, այն հնարավոր է առաջացնի հոդացավ, հոդի այտուց, շարժումների սահմանափակում և արագ հոգնածություն:*

**Ի՞նչ է ԻԼ-6?**
*Ինտերլեյկին-6ը (ԻԼ-6) սպիտակուց է, որը առաջանում է իմունային համակարգում: Օրգանիզմը օգտագործում է ԻԼ-6ը ղեկավարելու բորբոքումը և վարակները:*

**Ի՞նչ է ակտեմրան:**
*Ակտեմրան բիոլոգիական դեղ է (ստացվում է կենդանի բջիջներից, որոնք հետո իրականացնում են բուժումը), որը պարունակում է ակտիվ նյութ՝ տոցիլիզումաբ, սպիտակուց, որը ստացվում է սպեցիֆիկ իմունային բջիջներից (մոնոկլոնալ հակամարմիններից),որոնք խափանում են սպեցիֆիկ սպիտակուցի՝ցիտոկինի (ինտերլեյկին ԻԼ -6) գործունեությունը: Ակտեմրան օգտագործում են բուժելու պՅԻԱ – ը երեխաների մոտ:*

**Ինչպե՞ս է ակտեմրան հետազոտվել պՅԻԱՅ-ի ժամանակ:**
*Ակտեմրան հետազոտվել է երեխաների մոտ , որոնք ունեն պՅԻԱ: Այն հետազոտվել է պՅԻԱյի ինչպես մեթոտրեքսատի հետ զուգընթաց բուժման մեջ, այնպես էլ մոնոթերապիայում:*

**Ինչպես է ակտեմրան օգտագործվում պՅԻԱՅի ժամանակ:**
*Ակտեմրան օգտագործվում է բուժելու 2 տարեկան և ավելի երեխաների մոտ, որոնք ունեն պոլիարտիկուլյար յուվենիլ իդիոպատիկ արթրիտ: Այն բորբոքային հիվանդություն է, որը առաջացնում է մեկ և ավելի հոդացավ և այտուց:*

*Ակտեմրան օգտագործվում է բարելավելու պՅԻԱյի ախտանիշները: Այն կարելի է նշանակել մետոտթեքատի հետ զուգընթաց կամ առանձին:*

*Ակտեմրան չի հետազոտվել բիոլոգիական այլ դեղերի զուգընթաց պՅԻԱյի բուժման մեջ:*

*Քանի որ ակտեմրայի բուժման ժամանակ հնարավոր է բարձրանա վարակների առաջացման հավանականությունը, այն չպետք է նշանակվի այլ բիոլոգիական դեղերի հետ զուգընթաց՝ նախատեսված պՅԻԱյի բուժման համար: Այդ դեղերն են. էնբրել® (էտաներցեպտ), հումիրա® (ադալիմումաբ),ռեմիկեյդ® (ինֆլիքսիմաբ),մաբթերա® (ռիտուքսիմաբ), օրենցիա® (աբատացեպտ), կիներետ® (անակինրա),ցիմզիա® (ցերտոլիզումաբ պեգոլ)և սիմպոնի® (գոլիմումաբ)*[1]:

[1]Էնբրելը ® Ամգեն և Պֆայզեր կազմակերպությունների կողմից գրանցված դեղն է; Հումիրան®՝ ԱԲԲՎԻի; Ռեմիկեյդը®՝ Շերինգ-Պլաու կորպորացիայի; Մաբթերան®՝ Հոֆֆմանն-Լյա Ռոշե ՍՊԸ-ի; Օրենցիան®՝ Բրիստոլ Մայերս Սքվիբի; Կիներետը®՝ Ամգենի; Ցիմզիան®՝ Յու Սի Բի կազմակերպությունների խմբի: Սիմպոնին®՝ Շերինգ-Պլաու և Ցենտոկոր կազմակերպությունների:

**Ինչպե՞ս է ակտեմրան նշանակվում պՅԻԱյի ժամանակ:**
*Ակտեմրան նշանակվում է ներերակային (երակի մեջ) (Ն/Ե) ներարկման ձևով: Ընդունման ձևերի վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար տե՛ս ստորև ներկայացրած համապատասխան մասը:*

**Ակտեմրայի ն/ե ներարկման նշանակման ձևը**

- Ձեր երեխայի բժիշկը կնաշանկի ակտեմրան ն/ե
- Մեկ դեղաչափի ընդունումը կտևի մոտավորապես 60 րոպե, ամենայն հավանականությամբ բազկի երակի մեջ:
- Դեղաչափը կախված է ձեր երեխայի մարմնի զանգվածից , այսպիսով, դեղաչափը հնարավոր է փոխվի բուժման ընթացքում:
- Ն/ե ակտեմրան նշանակվում է ամեն 4 շաբաթը մեկ անգամ

Կարևոր է, որ ձեր երեխան բաց չթողնի հերթական դեղաչափը: Եթե դա տեղի ունենա, կապվեք ձեր երեխայի բուժող բժշկի կամ բուժքրոջ հետ: Նա խորհուրդ կտա, թե երբ ընդունել հաջորդ դեղաչափը:

**Ինչպիսի՞ հետազոտություններ պետք է անել երբ ստանում են ակտեմրայիով բուժումը:**

Բժշկի, բուժքրոջ ամեն այցի ժամանակ ձեր երեխային կնշանակվի արյան հետզոտություններ՝ նրա բուժման մեջ ճիշտ կողմնորոշվելու համար: Այդ հետազոտությունները հնարավոր է լինեն ստորև ներկայացվածները.

• **Նեյտրոֆիլների հետազզոտություն.** բավարար քանակի նեյտրոֆիլներ ունենալը կարևոր է օգնելու պայքարել՝ ձեր օրգանզիմին վարակների դեմ: Ակտեմրան ազդում է իմունային համակարգի վրա՝ իջեցնելով նեյտրոֆիլների, արյան սպիտակ բջիջների, քանակը: Այս պատճառով, ձեր բժիշկը հնարավոր է ստուգի արդյոք ձեր երեխան ունի բավարար քանակի նեյտրոֆիլներ և վերահսկի վարակի ախտանիշների առկայությունը:
• **Թրոմբացիտներ.** տրոմբոցիտները արյան փոքր բջիջներ են , որոնք դադարեցնում են արյունահոսությունը՝ առաջացնելով թրոմբ: Որոշ մարդկանց մոտ ակտեմրայի օգտագործումը առաջացնում է թրոմբոցիների քանակի անկում: Կլինիկական հետազոտություններում, թրոմբոցիտների քանակի իջեցումը չի զուգորդվել որևէ լուրջ արյունահոսությունների հետ:
• **Լյարդի էնզիմներ.** Լյարդի էնզիմները սպիտակուցներ են, որոնք արտադրվում են լյարդում, որը տեղոփոխվում է արյուն, ինչը որոշ դեպքերում համարվում է լյարդի քայաքաման ցուցանիշ: Որոշ մարդկանց մոտ, որոնք ընդունել են ակտեմրա, նկատվել է լյարդի էնզիմների քանակի բարձրացում, ինչը հնարավոր է լինի լյարդի վնասման նշան: Լյարդի էնզիմների քանակի բարձրացումը ավելի հաճախ հանդիպել է այն ժամանակ, երբ ակտեմրան նշանակվել է լյարդի համար վնասակար դեղերի հետ

միասին: Եթե դա տեղի ունենա, ձեր բժիշկը պետք է վերահսկի դա: Նա հնարավոր է վերանայի ակտեմրայի կամ այլ դեղի դեղաչափը, կամ դադարեցնի ակտեմրայի և/կամ այդ դեղի ընդունումը:

• **Խոլեստերոլ.** որոշ մարդկանց մոտ, որոնք ընդունել են ակտեմրա, հանդիպել է խոլեստերոլի մակարդակի բարձրացում արյան մեջ: Եթե այդ տեղի ունենա, ձեր բուժող բժիշկը հնարավոր է նշանակի խոլեստորոլ իջեցնող բուժում:

**Կարո՞ղ են հիվանդները, որոնք ստանում են ակտեմրա, պատվաստվել:**
Ակտեմրան դա դեղ է, որը ազդում է իմունային համակարգի վրա և իջեցնում է մարմնի դիմադրողականությունը վարակների դեմ: Կենդանի կամ կենդանի-ատենուացված պատվաստանյութերով (որոնք պարունակում են քիչ քանակի կենդանի կամ թուլացած մանրէներ), ինչպիսին է գրիպի դեմ պատվաստումը, չպետք է նշանակվի ակտեմրայի բուժման ժանմանակ: Հիվանդները պետք է ստանան բոլոր նախատեսված պատվաստումները մինչև բուժումն սկսելը:

**Որո՞նք են ակտեմրայի հետ կապված հիմնական կողմնակի ազդեցությունները:**
Հետազոտություններում հիմնական կողմնակի ազդեցությունները, որոնք հանդիպել են ակտեմրայով բուժման ընթացքում, սովորաբար եղել են միջին ծանրության և չեն պահանջել բուժման ընդհատում: Հիմնական կողմնակի ազդեցության դեպքերն են.

- Վերին շնչուղիների վարակներ (բնորոշ ախտանիշներով, ինչպիսիք են հազը, քթարդաղրություն, կոկորդի ցավ, բորբոքումը, գլխացավը)
- Մրսածություն
- Գլխացավ
- Արյան բարձր ճնշում
- Քոր
- Հոգնածություն
- Ներարկման տեղի ռեակցիաներ (հիմնականում ենթամաշկային ներարկման ժամանակ)

## Որո՞նք են ակտեմրայի կողմնակի ազդեցությունները:

**Վարակներ. Ակտեմրան դեղ է, որը ազդում է հիվանդի իմունային համակարգի վրա: Իմունային համակարգը կարևոր է, քանի որ այն օգնում է հիվանդին պայքարելու վարակների դեմ:** Հիվանդի կարողությունը պայքարելու վարակի դեմ հնարավոր է լինի իջեցված ակտեմրայով բուժման ժամանակ: Լուրջ վարակները հնարավոր է պահանջեն հատուկ բուժում և հոսպիտալացում, ինչպես նաև որոշ դեպքերում նաև լինեն մահվան պատճառ: Շատ կարևոր է, որ դուք անմիջապես տեղեկացնեք Ձեր բժշկին կամ բուժքրոջը ցանկացած վարակի նշանների դեպքում:

**Անմիջապես դիմեք բժշկի,** եթե դուք կամ ձեր հիվանդը նկատել եք ստորև ներկայացրած ինֆեկցիայի նշաններից որևէ մեկը՝

- Տենդ կամ դող
- Կայուն հազ

- Մարմնի զանգվածի կորուստ
- Կոկորդի ցավ կամ բորբոքում
- Հնոց
- Մաշկի, բերանի խոռոչի լորձաթաղանթի կարմրում, այտուց կամ վերքեր
- Ծանր թուլություն, հոգնածություն
- Ստամոքսի ցավ

**Ալերգիկ ռեակցիաներ.** հիմնական ալերգիկ ռեակցիաները տեղի են ունենում ակտեմրայի ներարկումից 24 ժամվա ընթացքում, չնայած որ հնարավոր է զարգանան ցանկացած ժամանակ: Լուրջ ալերգիկ ռեակցիաները, ներառյալ անաֆիլաքսիան, արձանագրվել են ակտեմրայի ներարկման ժամանակ: Այսպիսի ռեակցիաները հնարավոր են լինել ավելի ծանր, և պոտենցիալ մահացու այն հիվանդների մոտ, որոնք ունեցել են ալերգիկ ռեակցիաներ ակտեմրայի նախորդ ներարկման ժամանակ:

| Ն/Ե ներարկում<br><br>(հիվանդանոցում) |
|---|
| Ներարկման ժամանակ, ձեր բժիշկը կամ բուժքույրը կհետևի ալերգիկ ռեակցիայի որևէ նշան հայտնաբերելու համար: |
| **Եթե անաֆիլքտիկ ռեակցիա կամ այլ լուրջ ալերգիկ ռեակցիա հայտնաբերվի, ակտեմրայի ներարկումը պետք է անմիջապես ընդհատվի, համապատասխան բուժում նշանակվի, իսկ ակտեմրայի նշանակումը ընդմիշտ կհանվի:** |

**Դիմեք բժշկի** , եթե ակտեմրայի ընդունման ժամանակ նկատեք ստորև ներկայացրած ալերգիկ ռեակցիներից որևէ մեկը.

- Քոր, ցան կամ եղնջացան
- Շնչառության վատացում կամ ծանրություն
- Շրթունքների, լեզվի կամ դեմքի այտուց
- Կրծքավանդակի ցավ
- Գլխապտույտ կամ թուլություն
- Սուր որովայնացավ կամ սրտխառնոց
- Արյան ճնշման անկում

**Չընդունեք հաջորդ դեղաչափը, մինչև որ չտեղեկացնեք ձեր բժշկին, որ դուք կամ ձեր երեխան ռունեցել է որևէ ալերգիկ ռեակցիա ակտեմրայի ներարկումից հետո և ձեր բժիշկը թույլ չտա դեղաչափի ընդունումը:**

**Որովայնացավ.** հիվանդները , որոնք ընդունել են ակտեմրա հազվադեպ ունեցել են լուրջ կողմնակի ազդեցություն իրենց ստամոքսի կամ աղիների վրա: Նշաններից են եղել են տենդը երկարատև ստամոքսացավի հետ, որը ընթացել է աղիների ֆունկցիայի փոփոխումով: Դիմեք բժշկի, եթե դուք կամ ձեր երեխան ունեցել եք ստամոքսացավ կամ կոլիկներ, կամ եթե նկատել եք արյուն կղանքի մեջ:

**Նորագոյացություններ.** բժշկական դեղերը, որոնք ազդում են իմունային համակարգի վրա, ինչպիսին է ակտեմրան, հնարավոր է բարձրացնեն նորագոյացության առաջացման հավանականությունը:

**Ամփոփում և կոնտակտային տեղեկություն**
Այս պՅԻԱ գրքույկը պարունակում է ակտեմրային վերաբերյալ որոշակի բայց շատ կարևոր տեղեկություն: Դեղերը երբեմն նշանակվում են այլ պատճառների համար: Մի՛ օգտագործեք ակտեմրան այն դեպքերի ժամանակ, երբ այն ցուցված չէ:

**Տեղեկացրե՛ք ձեր բժշկին կամ դեղագետին ցանկացած կողմնակի ազդեցության մասին, որը ձեզ անհանգստացնում է: Այս գրքույկում նշված կողմնակի ազդեցության դեպքերը, կապված ակտեմրայի ընդունման հետ բոլորը չեն: Հարցրեք ձեր բժշկին, բուժքրոջը կամ դեղագետին հավելյալ տեղեկատվության համար:**

Զրուցե՛ք բժշկի, բուժքրոջ կամ դեղագետի հետ, եթե քուք ունեք որևէ հարցեր կամ խնդիրներ:

Կողմանկի ազդեցության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության համար տես "Դեղի ընդհանուր բնութագիր"-ը կամ ներդիր թերթիկը, որոնք հասանելի են ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ և ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ- ի կայքում, հետևյալ հղումով. www.pharm.am:

Կամ կարող եք հաղորդել նաև ստորև ներկայացված կոնտակտային տվյալներով.

ՖարմաՏեք ՍՊԸ-ի դեղերի անվտանգության բաժին՝ Հոֆֆմանն-Լյա Ռոշե ընկերության դեղերի անվտանգության պատասխանատու՝ Գայանե Ղազարյանին, հետևյալ բջջային հեռախոսահամարով. +37491796688, կամ անվտաբնգության մասնագետի փոխարինող՝ Ռիմա Դավթյանին. +374 10 734643 հեռախոսահամարով կամ գրել է/նամակ, էլ.հասցեյով. gayaneh.ghazaryan@gmail.com (rima@pharmatech.am), ինչպես նաև ուղղել Ձեր հաղորդակցությունը Ռոշ Մոսկվա դեղերի անբվտանգության բաժին՝ էլ.հասցե. moscow.ds@roche.com, բջջ. հեռ. +7-495-229 2999, ֆաքս: +7-495- 229 7999 կամ փորձեք կայք. www.roche.ru.

**Զանգահարեք՝**
ՖարմաՏեք ՍՊԸ անվտագության բաժնի Հոֆֆմանն-Լյա Ռոշե ընկերության դեղերի անվտանգության պատասխանատու՝ Գայանե Ղազարյանին, հետևյալ բջջային հեռախոսահամարով. +37491796688 կամ է.հասցեյով. gayaneh.ghazaryan@gmail.com

**պՅԻԱ –ով հիվանդների համար անհրաժեշտ պարագաներ**

Մինչև ակտեմրայի ընդունումը, խնդրում ենք կարդալ ստորև ներակայացված տեղեկությունը:

Ակտեմրան հնարավոր է չլինի հենց ձեզ համար: Մինչև ակտեմրայի սկսկելը, խնդրում ենք ուսումնասիրել ստորև ներկայացրած տեեկությունը , և հայտնեք ձեր բժշկին, եթե դուք պատասխանել եք <<ԱՅՈ>> ստորև ներկայացրած հարցերին.

| | ԱՅՈ | ՈՉ |
|---|---|---|
| **Վարակներ** | | |
| Դուք կամ ձեր երեխան ունե՞ք վարակ կամ ձեզ վատ ե՞ք զգում: (վարակների նշանները կարող են լինել՝ տենդ, հազ, բաց վերքեր կամ ցան (ջրծաղկի նման ցան կամ թեպոտում)) | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան բուժվել ե՞ք վարակների դեմ կամ ունե՞ք վարակ: | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել ե՞ք տուբերկուլոզ կամ եղել ե՞ք սերտ կոնտակտի մեջ տուբերկուլուզով հիվանդնի հետ: (Ձեր բժիշկը կփորձի համոզվել, որ դուք կամ ձեր երեխան չունեք ՏԲ մինչև ակտեմրայի ներարկումը) | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել եք կամ ստացել եք բուժում վիրուսային հեպատիտի կամ այլ լայրդի հետ կապված հիվանդության դեմ : | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել եք շաքարախտ կամ այլ հիվանդություն, որը կարող է բարձրացնել վարակների զարգանալու հավանականությունը: | ☐ | ☐ |
| **Ալերգիկ ռեակցիաներ** | | |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել ե՞ք ալերգիկ ռեակցիաներ նախորդ դեղերը (ներառյալ ակտեմրան) ստանալուց: | ☐ | ☐ |
| **Ստամոքս – աղիքային բարդություններ** | | |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել ե՞ք աղիքային խոցային հիվանդություն կամ դիվերտիկուլիտներ: (Նախանշանները հնարավոր է ներառեն որովայնացավը, կամ աղիների ֆունկցիայի անսպասելի փոփոխություն՝ տենդով): | ☐ | ☐ |
| **Բժշկական պատմություն** | | |
| Դուք կամ ձեր երեխան ունեցե՞լ եք թոքի ֆունկցիայի խանգարումներ: (Օրինակ՝ ինտերստիցիալ թոքի հիավդնություն, որը դժվարացում է թթվածնի ստանալը) | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան բուժվե՞լ եք քաղցկեղի համար: | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել եք սրտային կամ արյան շրջանառության խանգարումներ: (Օրինակ՝արյան բարձր ճնշում կամ խոլեստերոլի մակարդակի բարձրացում) | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան ունեցե՞լ եք երիկամների հիվանդություն: | ☐ | ☐ |

| | | |
|---|---|---|
| Դուք կամ ձեր երեխան ունեցել եք կայուն գլխացավ: | ☐ | ☐ |
| Հղիություն | | |
| Դուք կամ ձեր երեխան ունեք հղիություն, կամ մտադիր եք հղիանալ: (Այն կանայք, որոնք ունեն երեխա բերելու պոտենցյալ պետք է կիրառեն արդյունավետ հակաբեղբնավորիչներ բուժման ընթացքում (մինչև 3 ամիս և դրանից հետո: Ակտեմրան չպետք է նշանակվի, եթե բացարձակ ցուցված չէ) | ☐ | ☐ |
| Դուք կամ ձեր երեխան կրծքվ կերարկում եք կամ մտադիր եք սկսել կրծքով կերարկորումը: : | ☐ | ☐ |
| Դեղերը | | |
| Դուք կամ ձեր երեխան ունեցել եք պատվաստումներ, ինչպիսիսիք են գրիպի դեմ պատվաստումը կամ այլ պլանավորված պատվաստումներ: | ☐ | ☐ |
| Ակտեմրան կարոք է փոխազդել որոշ դեղերի հետ: Այս փաստը կարող է ազդել ձեր կամ ձեր երեխայի համաար հաշվարկված դեղաչաձի վրա: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե դուք կամ ձեր երեխան ստանում եք հետևյալ դեղերը. | ☐ | ☐ |
| –ատորվաստատին, որը օգտագործում են խոլեստերոլի իջեցման համար | ☐ | ☐ |
| –կալցիումի կանալների բլոկատորներ (օրինալ՝ ամլոդիպին,) որոնք օգտագործվում են արյան բարձր ճնշումը բուժման համար | ☐ | ☐ |
| –թեոֆիլին՝ ասթմայի համար | ☐ | ☐ |
| – վարֆարին՝ արյունը նոսրացնելու հաամր | ☐ | ☐ |
| –ֆենիտոին՝ կոնվուլսաների բուժման համար | ☐ | ☐ |
| –ցիկլոսպորիններ՝ իմունային համակարգը ճնշող դեղեր՝ նշանակվող օրգանների տրանսպանտացիաների ժամանակ | ☐ | ☐ |
| –բենզոդիազեպիններ (օրինակ տեմզեպամ)՝ իջեցնելու անհանսգտությունը | ☐ | ☐ |
| –Ցանկացած այլ դեղեր ցուցված պՅԻԱ-յի համար | ☐ | ☐ |
| ▪ Ոչ բիոլոգիական դեղեր՝ | | |
| ○ մետոտրեքսատ | ☐ | ☐ |
| ○ լեֆլունոմիդ | ☐ | ☐ |
| ▪ Բիոլոգիական դեղեր | | |
| ○ էտաներցեպտ | ☐ | ☐ |
| ○ ադալիմումաբ | ☐ | ☐ |
| ○ ինֆլիզիմաբ | ☐ | ☐ |
| ○ ռիտուքսիմաբ | ☐ | ☐ |
| ○ աբատացեպտ | ☐ | ☐ |
| ○ անակինրա | ☐ | ☐ |
| ○ ցերտոլիզումաբ պեգոլ | ☐ | ☐ |
| ○ գոլիմումաբ | ☐ | ☐ |

| | | |
|---|---|---|
| Դուք կամ ձեր երեխան ընդունում ե՞ք այլ դեղեր: (Տեղեկացրեք ձեր բժշկին կամ բուժքրոջը այն դեղերի մասին, որը դուք ստանում եք: Այն ներառում է դեղատոմսով և ոչ դեղատոմսով դորս գրվող դեղեր, վիտամիններ և խոտաբույսեր): | ☐ | ☐ |

Այս ուսուցողական նյութերը պարտադիր են, եթե ակտմերան գրանցված է՝ նվազեցնելու համար կարևոր վտանգների զարգացումը ակտեմրայով բոժման ժամանակ:

Վահան Արուշանյան,
Գլխավոր տնօրեն, ՖարմաՏեք ՓԲԸ 27.11.18 _____
ամսաթիվ / ստորագրություն

Գայանե Ղազարյան
Հայաստանում Ռոշե դեղերի անվտանգության
պատասխանատու 26.11.18 _____
ամսաթիվ / ստորագրություն